

Տեղի ունեցավ քաղաքացիների փետրվար ամսվա ընդունելությունը

16.02.2016



2016 թվականի փետրվարի 12-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մոտ տեղի ունեցավ քաղաքացիների հերթական ընդունելությունը:

Ընդունելության համար ցուցակագրվել էր 184 քաղաքացի, ընդունելության էին եկել 192-ը: Դրամական աջակցության խնդրանքով դիմել էին 190 քաղաքացիներ, որոնց խնդրանքը բավարարվեց: 2 քաղաքացիներ դիմել էին այլ խնդիրներով՝ աշխատանքի տեղավորման և բնակարանի ձեռք բերման հարցերով:

Նշված քաղաքացիների կողմից բարձրացված հարցերին լուծում տալու նպատակով հանձնարարություններ տրվեցին մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ ուսումնասիրել, օրենքով սահմանված կարգով և նախատեսված ժամկետներում պատասխանել այլ հարցերով դիմած քաղաքացիներին: